

**ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՎԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐԱՍԱՆԻ  
ԲԱՐԲԱՌՈՒՄ**

***Բանալի բառեր (Keywords). պարսկերեն, դերանուն, բարբառ, խոսվածք, քերականական փոփոխություններ, շարահյուսական***

Ինչպես գրական պարսկերենում, այնպես էլ Խորասանի բարբառում, դերանուններն իրենց նշանակությամբ և շարահյուսական առանձնահատկություններով լինում են անձնական, անորոշ, որոշյալ, ցուցական, ժխտական, հարցական, անդրադարձ և փոխադարձ:

Մույն հոդվածում մենք ուսումնասիրել ենք Իրանի Խորասան նահանգում տարածված Ֆերդոուսի, Մաշհադի, Թորբաթ-է Հեյդարիեի, Քաշմարի և Ղայենի խոսվածքների անձնական դերանվան կազմությունը՝ այստեղ առկա հնչյունական և քերականական փոփոխությունները համեմատելով գրական պարսկերենի հետ:

Անձնական դերանունը Խորասանի բարբառում լինում է երկու տեսակ, ինքնուրույն և կցական անձնական դերանուն: Ֆերդոուսի խոսվածքում կցական և ինքնուրույն անձնական դերանունները կազմվում են հետևյալ կերպ<sup>1</sup>

---

<sup>1</sup> Rāqebi M.H., “Barresi va towsif-e guyeše Ferdows”, Dānešgāh-e Ferdowsi Mašhad, 1381(2002), 57.

### Կցական անձնական դերանուն

	Պարսկերեն→Ֆերդոուսի խոսվածք	
	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	am→om-ketābom-գիրքս	emān→ema-ketābema-մեր գիրքը
2-րդ դեմք	at→et-ketābet-գիրքդ	etān→eta-ketābeta -ձեր գիրքը
3-րդ դեմք	aš→eš-ketābeš-նրա գիրքը	ešan→eša-ketābeša -նրանց գիրքը

### Ինքնուրույն անձնական դերանուն

	Պարսկերեն→Ֆերդոուսի խոսվածք	
	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	man→mo-ես	mā→mā-մենք
2-րդ դեմք	to→to-դու	šomā→šomā-դուք
3-րդ դեմք	u→u-նա	ānhā→išo-նրանք

Ղայենի խոսվածքում անձնական դերանուններն օգտագործվում են հետևյալ կերպ՝<sup>2</sup>

### Կցական անձնական դերանուններ

	Պարսկերեն→Ղայենի խոսվածք	
	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	am→ma-ketābma-գիրքս	emān→mā- ketābemā-մեր գիրքը
2-րդ դեմք	at→to-ketābeto-գիրքդ	etān→šomā- ketābešomā - ձեր գիրքը
3-րդ դեմք	aš→i-ketābi-նրա գիրքը	ešan→inu-ketābinu -նրանց գիրքը

<sup>2</sup> Zomoradiān R., “Barresi guyeš-e Qāyen; Āstān-e Qods-e Razavi”, 1368 (1989), 57.

### Ինքնուրույն անձնական դերանուններ

	Պարսկերեն→Ղայեհի խոսվածք	
	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	man→mo-ես	mā→mā-մենք
2-րդ դեմք	to→to-դու	šomā→šomā-դուք
3-րդ դեմք	u→i,u- նա	ānhā→inu, unu-նրանք

Անձնական դերանունները Թորքաթ-է Հեյդարիեի խոսվածքում կիրառվում են հետևյալ կերպ<sup>3</sup>

### Կցական անձնական դերանուններ

	Պարսկերեն→Թորքաթ-է Հեյդարիեի խոսվածք	
	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	am→om-ketābom-գիրքս	emān→emā-ketābema-մեր գիրքը
2-րդ դեմք	at→et-ketābet-գիրքդ	etān→etā-ketābetā -ձեր գիրքը
3-րդ դեմք	aš→eš-ketābeš-նրա գիրքը	ešan→ešā-ketābešā -նրանց գիրքը

### Ինքնուրույն անձնական դերանուններ

	Պարսկերեն→Թորքաթ-է Հեյդարիեի խոսվածք	
	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	man→mo-ես	mā→mā-մենք
2-րդ դեմք	to→to-դու	šomā→šemā-դուք
3-րդ դեմք	u→i,u- նա	ānhā→inā-unā-նրանք

<sup>3</sup> Mehrābi A., "Description of Turbatian Dialect", Tarbiat Modares University, Tehrān, 1374 (1995), 48.

Անձնական դերանունները Քաշմարի խոսվածքում կիրառվում են հետևյալ կերպ՝<sup>4</sup>

### Կցական անձնական դերանուն

	Պարսկերեն→Քաշմարի խոսվածք	
	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	am→om-ketābom-գիրքս	emān→emā-ketābema -մեր գիրքը
2-րդ դեմք	at→it-ketābit-գիրքդ	etān→etā-ketābeta - ձեր գիրքը
3-րդ դեմք	aš→iš-ketābiš-նրա գիրքը	ešan→ešā-ketābeša -նրանց գիրքը

### Ինքնուրույն անձնական դերանուններ

	Պարսկերեն→Քաշմարի խոսվածք	
	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	man→mo-ես	mā→mā-մենք
2-րդ դեմք	to→to-դու	šomā→šomā-դուք
3-րդ դեմք	u→o-(išon)-նա	ānhā→onā-նրանք

Մաշհադի խոսվածքում անձնական դերանունները կիրառվում են հետևյալ կերպ՝<sup>5</sup>

4 Eshaqi E., “Barresi va towsif-e guyeš-e Kašmar”, Dānešgāh-e Ferdowsi Mašhad, 1379 (2000), 78-79.

<sup>5</sup> Nejatīān H., “Barresi va towsif-e guyeš-e Mašhad”, Dānešgāh-e Ferdowsi Mašhad, 1390 (2011), 92.

### Կցական անձնական դերանուններ

	Պարսկերեն→Մաշհադի խոսվածք	
	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	am→om-ketābom-գիրքս	emān→emā-ketābemā -մեր գիրքը
2-րդ դեմք	at→et- ketābet-գիրքդ	etān→ etā- ketābetā - ձեր գիրքը
3-րդ դեմք	aš→eš-ketābeš-նրա գիրքը	ešan→ešā-ketābešā -նրանց գիրքը

### Ինքնուրույն անձնական դերանուններ

	Պարսկերեն→Մաշհադի խոսվածք	
	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դեմք	man→mo-ես	mā→mā-մենք
2-րդ դեմք	to→to-դու	šomā→šomā-դուք
3-րդ դեմք	u→u-նա	ānhā→unā-նրան

Ուսումնասիրելով Խորասանի բարբառի անձնական դերանվան կազմությունը՝ և այն համեմատելով գրական պարսկերենի հետ, նկատում ենք, որ վերոնշյալ խոսվածքներում կցական անձնական դերանվան եզակի և հոգնակի թվերի առաջին դեմքերը և հոգնակի թվի երկրորդ դեմքը նույն կերպ են կազմվում: Ի տարբերություն մյուս խոսվածքների՝ Քաշմարի խոսվածքում եզակի թվի երկրորդ դեմքի կցական անձնական դերանունը կազմվում է *it* հնչյունափոխված տարբերակով:

Կցական անձնական դերանունը եզակի թվի և հոգնակի թվերի երրորդ դեմքում վերոնշյալ բոլոր խոսվածքներում նույն կերպ է արտասանվում, բացի Քաշմարի խոսվածքից, որտեղ եզ.թ. գործածվում է *iš* տարբերակով, իսկ Ղայենի

խոսվածքի կցական անձնական դերանվան արտասանությունը հոգնակի թվում գրեթե ամբողջությամբ տարբերվում է մնացյալ խոսվածքներից:

Ուսումնասիրության առարկա խոսվածքներում ինքնուրույն անձնական դերանունը եզակի և հոգնակի թվերում նույն կերպ է կազմվում: Ի տարբերություն մյուս խոսվածքների, Թորբատ-է Հեյդարիեի խոսվածքում հոգնակի թվի երրորդ դեմքը գործածվում է *šemā* հնչյունափոխված ձևով: Եթե եզակի թվի երրորդ դեմքի կիրառությունը բոլոր խոսվածքների պարագայում նունն է, ապա հոգնակի թվի երրորդ դեմքը յուրաքանչյուր խոսվածքում գրեթե յուրովի է գործածվում:

## СТРОЕНИЕ ЛИЧНЫХ МЕСТОИМЕНИЙ В ХОРАСАНСКОМ ДИАЛЕКТЕ

*Армен Израелян*  
(резюме)

В этой статье мы изучили строение личных местоимений диалектов: Фердоуси, Торбат-е Хейдарие, Машхади, Каэни и Кашмири, которые распространены в районе Хорасана. Также изучили существующие здесь звуковые, грамматические изменения и сравнили с литературным персидским языком.